ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն
վարչական շրջանների
ընդհանուր իրավասության դատարանի դատավոր
Լ. Ավետիսյանին

թիվ ԵԱՔԴ/0016/01/14 քրեական գործով
տուժողի իրավահաջորդ
Գեորգի Միսակյանի

# ԴԱՏԱԿԱՆ ՃԱՌ

Հարգելի դատարան,

Այսքան ժամանակ չի եղել մի դեպք, որ բժիշկները իրենց անփութության և անգործության համար կանգնեն դատարանի առաջ: Հիմնականում նման դեպքերը վերջանում են ծեծ ու ջարդով և վերջում գործը փակվում է: Ես ընտրել եմ ամենաքաղաքակիրթ տարբերակը լուծել խնդիրը դատարան դիմելով: Ժողովրդի զգալի մասը չի վստահում բժիշկներին և մտածում են, որ նրանք զորեղ են և հնարավոր չէ կանգնեցնել պատասխանատվության առաջ: Հարգելի՛ դատարան, գործընթացի ժամանակ բոլորիս համար պարզ երևում էր, թե ինչպես են խոսքից խոսք փոխում, ցուցմունքից ցուցմունք, միջանցքներում պայմանավորվում, թե որ հարցին ինչպես են պատասխանելու: Վկաների ակնհայտ տարբերվող ցուցմունքները միայն խոսում են այն բանի մասին, որ փորձում են համոզել իրենց սուտը, կարծես թե ամեն ինչ արել են երեխային փրկելու համար: Այնպիսի տպավորություն ստեղծելով թե մենք չեղած բանի համար ենք պայքարում: Ամբողջ դատական նիստի ժամանակ Լիլիթ վարդանյանը և Զարուհի Այվազյանը շարունակեցին աշխատել բժշկական կենտրոնում: Դատարանում հայտարարում էին, թե Լիլիթ Վարդանյանը դասախոսում է իսկ Զարուհի Այվազյանը փորձագետ է

նշանակվել, որը առաջին իսկ լրատվամիջոցին պարզաբանում տալու ժամանակ հերքեցին, կարծես թե դատարանին պետք է համոզել, թե շատ խելացի են, կրթված ու գրագետ:

Բժշկական կենտրոնում անգամ ժողով չարեցին պարզելու համար, թե ի վերջո ինչ հիվանդությունից մահացավ իմ երեխան: Բարոյականության համար կարել էր գոնե ժամանակավորապես դադարեցնել նրանց աշխատանքային լիազորությունները մինչև գործը պարզաբանվեր: Դրա փոխարեն առանձին դեպքերում ժպտալով, քմծիծաղ տալով, որը բազմիցս նկատել եք և Դուք: 28 տարեկան բժշկուհին պլենդուզից ցածր մակարդակ որակեց 28 տարվա բժշկական փորձ ունեցող փորձագետի մակարդակը: 27.06.2014 թվ ԱՐ հեռուստաընկերությանը տրված հարցազրուզում ՀՀ Առողջապահության նախարարության Մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ Կարինե Սարիբեկյանը տվյալ գործով կարծիք է հայտնում, որ նման դեպքերում ծնողները պետք է հասկանալով մոտենան հարցին, չնեղվեն, մտածեն, որ Աստված տվեց, Աստված տարավ, մյուս տարի էլի կունենան: Բժշկական կոլեկտիվի անունից հանդես են եկել բաց նամակով, որում հայտնում էին իրենց անմեղության մասին, փոխարեն ներեղություն խնդրեն ծնողներից, սպառնում էին, թե դատարանում ոչնչի չեն հասնի, բժիշկին դատելով ավելի վատ կլինի:

Հարց է առաջանում, թե մահից ավելի վատ ի՞նչ կարող է լինել: Հիշեցնեմ, որ դատարանում բուժանձնակազմից ցուցմունք տվող վկան անգամ տեղյակ չէր, թե ինչի համար է ստորագրել: Դա խոսում է անպատժելիության մասին: Վստահ եմ, որ մեղավորները կպատժվեն, քանզի այլ տարբերակ լինել չի կարող: Չկա արդարացում մարդկանց, ովքեր կարող էին օգնել իմ երեխային բայց դա չարեցին: Ես լավ պատկերացնում եմ, թե ինչ գործի մեջ եմ մտել, թե ում շահերի հետ են բախվում այս գործով արդար դատավարությունը: Արդարությունը պետք է վերականգնվի, Հայաստանի Հանրապետության դատական մարմիներում

և Եվրոպական դատարաներում, անկախ շահագրգիռ կողմերի պաշտոնական դիրքից:

Այս գործով արդարությունը պետք է դաս լինի բոլորի համար որպեսզի մեր և ձեր երեխաներին սպասարկեն բարձրակարգ բժիշկներ:
Կոչ եմ անում Զարինե Այվազյանին և Լիլիթ Վարդանյանին, եթե ձեզ խոստացել են, որ ամեն լծակների կդիմեն ձեզ արդարացնելու համար ասեմ, որ չի ստացվելու իմ հետ պայմանավորվածության չեք գա, մինչև վերջ պայքարելու եմ, իմ սկսած գործը ավարտին եմ հասցնելու, ոչինչ և ոչ մեկը չի կարող կանգնել իմ առաջ:

Ընդունե՛ք Ձեր մեղքը կամ մատնանշեք մեղավորին, դժվար է մեղքով ապրելը:

Տուժողի իրավահաջորդ `

Գեորգի Միսակյան

04.05.2015թ